

Ա. Խ. Ս. Հ. Լուսժողկոմատի Կենս. Մանկ. Լաբորատորիա

# ԾՐԱԳՐԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

## ԼԵԶՎԻ ՑԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ IV ՔԱՌՈՐԴԻ ՆՅՈՒԹ

(ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 20-Ը  
1937-38 ՈՒՍ. ՏԱՐՎԱ)  
V-X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

491.99 (02)

Ծ- 98



ԱԶԵՐՆԵՐ  
Բագր.՝ 1938 թ.

491.99(07)  
8-98

38-6  
Ca2893

18 MAY 2010

## 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Քաղաք՝ 8 վեցորյակ, լեզու 20 ժամ. գրակ. 20 ժամ: Գյուղ՝ 7  
յորորյակ, լեզու 25 ժամ. գրակ. 24 ժամ.

### ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Անհղական դերանուններ, անհոգնակի դերանուններ:  
Կրկնողության կարգով դերանունների հոլովման վրա հար-  
կավոր ե լուրջ ուշադրություն դարձնել: Պետք ե կանգ առ-  
նել նաև այն դերանունների հոլովման վրա, վորոնք կամ  
յեղակի չունեն, կամ հոգնակի չունեն, այդպիսինները նախա-  
դասության մեջ պետք ե գործածել այլ անդամների հետ և  
կոնկրետ կիրառությամբ սովորեցնել:

ԴԵՐԱՆՈՒՆԻ (ԿՐԿՆՈՂՈՒԹՅՈՒՆ)

Քաղաք՝ 5 ժ. Գյուղ՝ 6 ժ.

Դերանուններն անցնելու ժամանակ հարկավոր ե բացա-  
տրել, վոր դերանուններ են վոչ միայն այն բառերը, վո-  
րոնք փոխարինում են գոյականին, այլ և ածականին, թվա-  
կանին և մակրային: Փոխարինում ասելով չպետք ե հաս-  
կանալ, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարելի յե ա-  
սել, թե վոր գոյականին, ածականին կամ թվականին ե փո-  
խարինում դերանունները, այլ վոր՝ դերանուն նշանակում ե  
կամ առարկա, կամ հատկություն, կամ գործողության պա-  
րագա, կամ թե թիվ, առանց, սակայն անմիջականորեն ցույց  
տալու, թե ինչ առարկա յե, հատկություն ե, թիվ ե և  
այլն:

Դերանուններն անցնելիս պետք ե կոնկրետ որինակների  
վրա վարժություններ տալ դասարանում և տանը (որ,  
աշակերտը պարապում ե: Նա դաս ե սովորում: Մայիսի  
1-ին փողոցով մեծ բազմություն եր անցնում: Այսպիսի  
բազմություն առաջին անգամ եմ տեսնում, և այն:)  
ՍԻԵՄԱՆԵՐ ՅԵՎ ՈՒՂՂՈԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԱՐԺՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐ

Քաղ. 5 ժ. Գյուղ. 6 ժ.

Այս քառորդում քերականական նյութի ամփոփման և

Դադարկեցին՝ Գ. Անտոնյան և Գ. Անդրեասյան  
Խմբագրեց՝ Ս. Հովհաննիսյան  
Տեխ. խմբագրեց և ուղագրեց՝ Դավթյան

Istehsalat verilmiş 7/III-38.

Capa imzalanmış 26/III-38.

Cap listi 2. Каզъ формат 82×110<sup>1/2</sup>.

Bir cap listində getmiş hyrufat 46464.

Baş Mətbuat Myidrlili Myvəkkilliji № 1595.

Azərnəşr № 205/21.

Tiraz 1.000. Sifariş № 306.

Azərnəşt mətbəəsində basıldı, 26-lar adına „Kitab Sarayı“, Bakı,  
Əli Bajramov kycəsi.

համադրման համար անհրաժեշտ ե սխեմաներ և բառացուցակներ կազմել: Սխեմաները պիտի մնածղիք գծագրությամբ կախել դասարանի պատից: Անհրաժեշտ ե կազմել սխեմա պարզ ընդարձակ նախալսության, իրենք շարահյուսական նախագիտելիք:

„ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ Ա. ԴԱՐԻԲՅԱՆԻ:  
ՍԽԵՄԱ. № 2

3-7 սխեմաները, (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ) յեթի ուսուցիչը նյութի անցման ժամանակ հաջորդականությամբ չի անցել, կրկնողության կարգով անհըրաժեշտ ե անցնել:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԽՈՍՔԻ ՄԱՍՍԻ  
„ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ Ա. ԴԱՐԻԲՅԱՆԻ  
ՍԽԵՄԱ. № 3,4,5,6,7.

Քաղ. 4 ժ. Գյուղ՝ 6 ժ.

Ձեվաբանական վերլուծության ժամանակ հետեւլողական կերպով մատնանշվում են տվյալ քերականական կատեգորիայի բոլոր հատկանիշները: Նախ և առաջ պետք ե ասել, ինչ խոսքի մաս ե (գոյական, բայ և այլն):

Գոյականների համար՝ հողով, թիվ: Բայերի համար՝ ժամանակ, յեղանակ, խոնարհում և այլն:

Սովորած ածանցների միջոցով ինչ խոսքի մասեր կարելի յե կազմել և այլն: Ուսումնասիրած յերեփույթն անհրաժեշտ ե ամրացնել մի շարք վարժությունների միջոցով: Ձեվաբանական վարժությունները պիտի կատարել նախադասությունների մեջ և վոչ թե լոկ բառերով:

### ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տառասխալների գլխավոր պատճառներից մեկն այն ե, վոր բառի արտասանությունը և գրությունն իրար չեն համապատասխանում:

„ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՍՈՒԹՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ“ Ա. ԴԱՐԻԲՅԱՆԻ. Տիկիդ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԵԶ-9-14:

Հայոց լեզվի մեջ բավական քանակությամբ բառեր արտասանվում են մի կերպ, իսկ գրվում են այլ կերպ. որինակ՝ հետեւլոյալ բառերն ըստ արտասանության պետք ե գըրվելին՝ ավար, բուրթ, վարթ, դարցյալ, վերչ, անմիջապես, այն

ինչ գրվում են՝ ավագ, բուրդ, դարձյալ, վերջ, անմիջապես և այլն:

Բացի այդ, կան բառեր, վորոնք գրվում են տարրեր և տարրեր ել իմաստ ունեն, սակայն արտասանվում են միասնակ և այդ պատճառով ել գրողին թյուրիմացության մեջ են գցում, որինակ՝ հարդ-հարթ, թոչել-թրջել և այլն:

Կան բառեր ել, վորոնք թեև տարրեր են գրվում և տարրեր ել արտասանվում են, բայց վորովհետև արտասանությամբ բավական մոտ են իրար, այդ պատճառով ել թյուրիմացության մեջ են գցում անվարժ գրողին, որինակ՝ հընչուն-հնչուն, կարգ-կառը, սար-սառ, վար-վառ և այլն:

Ուսուցիչը սխալները կանխելու համար մինչեվ գրավոր աշխատանք առաջադրելը պետք ե կանդ առնի այդ տիպի սխալների վրա և բացատրի համապատասխան տեքստում: Պիտի ընդգծել, վոր ընդհանրապես տառասխալներ են պատառում այն բառերի մեջ, վորոնց հնչուններն արտասանության և ձախային վորակի տեսակետից իրար մոտ են, այդ հնչուններն են ձ-ձ, ծ-ծ, ց-ց, ր-ռ, տ-տ, կ-ք, դ-խ, չ-ջ, և այլն:

Սովորողը յեթե չի իմանում բարդ բառերի կազմությունը նույնպես սխալներ ե անում: Ուստի հարկավոր ե վարժություններ անել այդպիսի բառերի ուղղագրությունը սովորեցնելու համար:

Որինակ՝ յերբ սովորողը չի իմանում, վոր անընդհատ բառը կազմված ե ան նախածանցից, ընդ նախզիրից և հատ բառից, նա անցուշտ սխալ ե անում:

Սովորողը քերականական կանոններին անծանոթ լինելու պատճառով անցյալ կատարյալի Յ-րդ գեմքի վերջին հընչունը չի տարրերում նույն բառի հարակատար դերբայի վերջին հնչունից. այսպես որինակ՝ ասած—ասաց, կարդաց—կարդացած, խոսած—խոսեց, գնաց—գնած և այլն:

Բերած որինակներից պարզ ե, վոր ուղղագրություն սովորեցնելու մեթոդը պիտի համարել լեզվակիտական քերականական կանոնների իմաստային ուսումնասիրությունը, վորովհետև այդ յեղանակով ավելի դյուրին և տիրապետել գրավոր լեզվի շարահյուսությանը գիտակցորեն, այլ վոչ թե մեխանիկորեն:

### ԱՇԽԱՏԱՆՔ ԲԱՌԱՐԱՆՈՎ

Սովորողների բառապաշտարը հարստացնել և անհասկանալի բառերը բացատրել կազմել նոր բառերի (այսպիսի բառերի, վորոնց հետ սովորողը ծանոթ չի յեղի) բառարան:



բառարանով՝ աշխատել (ամենից առաջ ուղղագրական բառարանով): Բառարանով աշխատանքն ուսուցիչը պիտի կատարի սխստեմատիկաբար ամբողջ ուսուցնական տարվա ընթացքում սովորողների բառապաշտարը հարստացնելու, նոր նախադասություններ ու գարձափածներ կառուցելու ունակություններ ձեռք բերելու նպատակով:

Բառարանով աշխատելու ժամանակ սովորողները պետք են կարողանան մաքուր գրական լեզվով (գրավոր և բանավոր) արտահայտվել և հեռու մնալ պարագիտային (ավելորդ) բառերից:

### ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՅՆԸ

Պատմվածքից և պարբերություններից հիմնական գաղափարները և մտքեր առանձնացնելու հմտություն: Պարբերություններ կազմելու ունակություններ: Պարզ պլան կազմել: Փոքրիկ ինքնուրույն ստեղծագործական շարադրություններ և առանձին հոգվածների համառոտ բովանդակության վերարտադրություն:

Նկարների բովանդակության բանավոր և գրավոր վերաբերություն:

Գեղարվեստական յերկի մշակման ժամանակ սովորեցնել աշակերտներին ինչպես բանավոր, այնպես ել գրավոր առանձին մասերի բաժանել և տալ համապատասխան վերնագիր:

### ԴՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

#### Քաղաք՝ 6 Ժ. Գյուղ՝ 7 Ժ.

Վերը հիշված ուղղագրական կանոնների հիման վրա կատարել վարժություններ հետեւյալ հաջորդականությամբ:  
1) Գեղարվեստական յերկից փոքրիկ կտորների արտադրություն. (գիտակցական.)

2) Բացատրական թելադրություն.

3) Լսողական — նախազգուշական թելադրություն.

4) Դիտողական թելադրություն.

5) Քերականական և վոճաբանական վարժություններ:

Այս քառորդում հարկավոր ե գրել 3 շարադրություն և 2 ստուգական թելադրություն: Շատ կարեվոր ե այս դասարանում սովորեցնել շարդրություն գրելու ունակություններ. կարգացած տեքստի շուրջը պլան կազմելու հմտություն:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մերոդական ցուցմունքներ գրականության դասի ըուրշը.

Անհրաժեշտ է 5—րդ դասարանում սովորողներին ծանոթացնել խոշոր կասիկ և ժամանակակից գրողների գործերի հետ այն առումով, վոր ապահովի բարձր դասարաններում գրականության պատմության նյութի անցումը:

Անհրաժեշտ է, վոր սովորողները կարողանան կարգացածի համառոտ բովանդակությունը թե բանավոր և թե գրավոր վերարտադրել. բնութագրել գլխավոր պերսոնաժներին:

Գեղարվեստական գրականությունից առանձին հատվածներ լավ առոգանությամբ կարգալ և արտասանել. կարգացած հոդվածի կամ պատմվածքի շուրջը զրույց կազմակերպել. հոդվածն առանձին վերնագրերի բաժանել և համապատասխան վերնագրեր տալ:

Այս քառորդում ուսուցիչը պետք է յուրաքանչյուր նոր նյութ անցնելուց առաջ կրկնողության կարգով կապի 1, 2, 3-րդ քառորդներում անցած նյութերի հետ:

### ՍԵՐԱՖԻՄՈՒԻՉ

#### Քաղաք՝ 7 Ժ. Գյուղ՝ 8 Ժ.

Սերաֆիմովիչի համառոտ կենսագրությունը. „Կոժուխի հաղթությունները“ (հատված „Տերկաթե հեղեղ“-ից) հոդվածը կարգալ, առանձին մասերի բաժանել և համապատասխան վերնագրեր տալ: Հոդվածի բովանդակությունը պատմել նախորդ կազմած պլանով:

### ՎԻԿՈՐ ՀՅՈՒԽՈՒ

#### Քաղաք՝ 7 Ժ. Գյուղ՝ 8 Ժ.

Հյուգոյի համառոտ կենսագրությունը: „Բարիկադների վրա“ կարգալ պատմել և տալ համառոտ բովանդակությունը: „Բարիկադների վրա“ առանձին գերերի բաժանել և սովորեցնել խմբական արտասանություն: Առանձին ուշադրություն դարձնել դրամատիկացիայի վրա:

#### Ե. ԶՈԼԱ

#### Քաղ. 6 Ժ. Գյուղ. 8 Ժ.

Ե. Զոլայի համառոտ կենսագրությունը: „Գործադուլ“ (հատված „Ժերմինալ“-ից):

Նախ ուսուցիչն եղարդում, ապա տշակերաները: Առանձին ուշադրություն դարձնել առողանության վրա: Հարց ու պատասխանի միջոցով տալ հոդվածի հիմնական մտքի բացատրությունը: Նախորոք կազմել պլան և համառոտ, բայց եյական գծերով վերաբարերել հոդվածի բովանդակությունը: Ծանոթություն—լեզվից 6 ժամ տրվում ե գրավոր աշխատանքներին:

## 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Քաղաք՝ 8 վեցորյակ. 32 ժամ: Գյուղ՝ 7 յոթորյակ. 35 ժամ: Լեզու՝ 12 ժամ, գրականուրյուն՝ 15 ժ. գրավոր՝ 5 ժամ

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Նախադասության տեսակներն ըստ բնույթի: Քաղ. 4 ժ. Գյուղ՝ 4 ժ.

Հարցական, պատմողական, բացականչական և հրամայողական նախադասություններ. կետադրություն. սովորեցնել ձայնարկությունների գործածությունը բացականչական նախադասությունների մեջ և կետադրությունը, կոչական բառերով նախադասություններ, միջանկյալ բառերով նախադասություններ. հաստատական և ժխտական նախադասություններ. կետադրություն:

Պետք ե ի նկատի ունենալ շարանյուսության սպեցիֆիկումը, վոր խոսքի կապակցությունը հասկանալու հոմարանիրաժեշտ և խոսքը բաժանել համապատասխան բաղադրիչ մասերի և գտնել դրանց փոխնարարերությունը (բառագույգեր, ինդրառություն, համաձայնություն և այլն):

Յուրաքանչյուր նախադասություն վերլուծելիս սովորողը պետք է կարողանա գտնել նախադասության կազմակերպող կենարունները՝ յենթական և ստորոգյալը և դրանց շուրջը համախմբվող բառ երը:

ԶԵՂՋՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Քաղ. 3 ժ. Գյուղ՝ 4 ժ.

(Սասրուցյալը բայց դեմքով և թվով մատնացույց ե անում յենթական):

Անենթակա նախադասություններ. պետք ե սովորողներին մանրազնին կերպով բացատրել, վոր այդ նախադասությունները լինում են՝

ա) Յերբ յենթական չկա ընդհանրապես, և յենթական ու ստորոգյալը արտահայտված են միասին մի բառով (մըթնում ե, լուսացավ, անձրեվելու յե և այլն):

բ) Յերբ յենթական չի արտահայտված և անհնար և վերականգնել և արտահայտել. այդպիսի նախադաշտություններն ասվում են սովորաբար իբրև առած (յերկաթը տաքտաք կծեծեն, ճտերն աշխան են հաշվում, ասում են՝ ուռին աղջիկ եր ինձ պես):

գ) Յերբ գործողությունը վերաբերվում է ընդհանրապես բոլորին և վոչ թե առանձին անձերի կամ առարկաների. որինակ՝

ա) Այստեղ չի նստվում.

բ) Այդ ինդրի մասին գրվել ե.

Համադաս կամ բազմակի անդամներով նախադասություններ՝ Փաղ՝ 4 ժ. Գյուղ՝ 4 ժ.

Կետադրություն, քերականական նյութին ամրացնելու համար ուսուցիչը տալիս ե առաջադրություններ.

ա) Կազմել սխեմաներ պարզ ընդարձակ նախադաշտության և ամբողջ ձեփաբանության. լեզվի դասի ընթացքում քերականության նյութը լավ ըմբռներուց և տերմինները յուրացնելուց հետո սխեման մեծացնել և փակցնել դասարանի պատից:

Հայոց լեզվի քերականության սխեմաները Ա. Ղարիբյանի. Սեհմա № 1

Բանավոր յեվ գրավոր խասի զարգացումի

Բանավոր և գրավոր խոսքի զարգացման ընթացքում հատուկ ուշադրություն զարձնել լեզվիկայի վրա և ողտագործել գրական լեզվի ճոխությունը: Այս հարցում խոշոր դեր են կատարում բանավոր և զրավոր խոսքին վերաբերվող դասարանային և տնային աշխատանքներն ու վարդությունները:

Այդ աշխատանքների միջ մեծ տեղ պիտի բննեն շարադրությունները և գործնական գրությունները (արձանագրությունն, տեղեկանք, ստացական) թղթակցությունները, կոնսպեկտները և այլն:

Սովորովը պիտի պարզ պատկերացնի, թե թեման շարադրելու համար ինչ հիմնական ողակներ են անհրաժեշտ:

ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԱԴԻ ՎՐԱ

Հոդվածը համառոտել և ընդարձակել: Պարզ պլան կազմել կարգացած հոդվածի կամ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի: Գեղարվեստական հատվածի գրավոր և բանավոր վերաբերականություն:

## ԳՐԱԴՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Քաղ. 5 ժամ. Գյուղ՝ 5 ժամ:

Այս դասարանում սովորողը պետք է կարողանա տարբերել պատմողական տեքստը նկարագրականից:

Գեղարվեստական յերկի գրավոր վերաբերականից ժամանակ սովորողը պետք է կարողանա տարբերել հիմնականը յերկրորդականից:

Այս քառորդում անհրաժեշտ է յերեք գրավոր՝ գրականության շուրջը և յերկու ստուգողության թելաղբություն:

ա) Պարզ բնութագրություն:

բ) Ինչպես տոնեցինք մայիսի 1-ը:

գ) Վորեա հոդվածի համառոտ բովանդակությունը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԳՐԱԿՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՑՈՒՐՁԸ

Գրականության գասերին 6-րդ դասարանում պիտի ծանոթացնել սովորողներին կլասիկ և ժամանակակից գրողների գործերի հետ այն առումով, վոր ապահովի բարձր գասարաններում գրականության պատմության սխսեմատիկ կուրսի անցումը:

Այսհրաժեշտ է սովորեցնել կարդալ գեղարվեստական յերկեր, գրավոր և բանավոր վերաբերագրել կարգացածի բովանդակությունը. Կարողանալ ընութագրել գեղարվեստական յերկի զիմավոր պերսոնաժներին:

Սխսեմատիկ կերպով խորացնել գրական լեզվի կուրսության: Մեծ ուշադրություն զարձնել սովորողների բանավոր պատասխանների վրա: Բանավոր խոսքի զարգացումն ապահովելու համար գեղարվեստական կտորներ անգիր անել (թե չափածո և թե արձակ):

Գրականության գասատուներն արտադասարանական ընթերցանությունը պետք է կազմակերպեն այնպես, վոր վոչ միայն սովորողին ընդհանուր զարգացում տալ, այլ և ոժանդակել անցած թեմաների ամուր յուրացմանը:

Ա. Ս. ՑՈՒՐՁԿԻՆ

Քաղաք՝ 5 ժ. Գյուղ՝ 5 ժ.

Պուշկինի կյանքն ու գրական գործունեյությունը: Պուշկինի գերը սուս ժողովրդի և բոլոր ժողովուրդների գրակա-

նության պատմության մեջ: «Զմեռվա իրիկուն» վոտանավորն անգիր անել:

Գաղափար տալ Պուշկինի լեզվի տուանձնահատկության մասին:

Հասկացողություն տալ բանաստեղծական լեզվի մի շարք հատկանիշների մասին — եպիտեսներ, համեմատություններ և մետաֆորներ:

„Կովկաս“ վոտանավորն անգիր անել: Պուշկինի այս վոտանավորում արծարծած մտքերը՝ նշել, վոր Պուշկինն անչափ բարձր ե յեղել իր ժամանակի պրոգրեսիվ մարդկանցից նաև նրանով, վոր նա հակառակ տիրող մեծապետական շովինիզմի, յեղել խորը ինտերնացիոնալիզմի կրող: Առանձին ուշադրություն դարձնել վոտանավորի վերջին քառյակի վրա:

### Ն. ՈՍՏՐՈՎՍԿԻ

Քաղաք՝ 5 Ժ. Գյուղ՝ 5 Ժ.

Ն. Ոստրովսկու կենսագրությունը. կարդալ և հանգամանողեն ծանոթանալ Ոստրովսկու կյանքի ու գրական գործունեյության հետ: «Արիություն» յերկի ընթերցանությունն ու վերլուծությունը: Ոստրովսկու կենսագրության վրա ուսուցիչը պետք ե լուրջ ուշագրություն դարձնի, վորովհետև նրա կենսագրությունը հսկայական դաստիարակչական նշանակություն ունի:

«Պավել Կորչագինի բաջագործությունները» (հատված „Խնչպես և կոփկում պողպատը“ վեպից):

Կազմակերպել զրոյց հոգվածի շուրջը. հոգվածի ընթերցանությունը դասարանում և բովանդակության բանավոր վերաբերությունը նախորոք կազմած պլանով:

### Ե. ՆԻՌՈՇՎԻԼԻ

Քաղաք՝ 3 Ժ. Գյուղ՝ 4 Ժ.

Եգնատի Նինոշվիլու կենսագրությունը: «Ապստամբությունը Գուրիայում» գրածքի ընթերցանությունը: Գրվածքի բովանդակությունը բանավոր վերաբետքելու համար պլան կազմել: Ոբրազների վերլուծումը:

### ՀԱՆՐԻ ԲԱՐԲՅՈՒ

Քաղաք՝ 3 Ժ. Գյուղ՝ 4 Ժ.

Հանրի Բարբյուսի կյանքն ու գրական գործունեյությունը: «Յերկաթյա ձեռքը» — (մի զլ. «Ստալին» գրքից):

Զբոյց Հանրի Բարբյուսի «Ստալին» գրքի մասին: «Յերկաթյա ձեռքը» յերկի բովանդակության բանավոր վերաբետքությունը պլանով: Աշակերտությանը տեղեկություն տալ քաղաքացիական կոիվների մասին:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐԻ  
ՑՈՒՑԱԿ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

- 1) Հ. Հակոբյան . . . . . «Բանաստեղծություններ»
- 2) Սա. Զորյան . . . . . «Կարմիր ալագիւ»
- 3) Ղ. Աղայան . . . . . «Յերկու քույր»
- 4) Գ. Պողյան . . . . . «Յեցեր»
- 5) Ֆ. Շիլեր . . . . . «Վիլհելմ Տելլ»
- 6) Վ. Փափազյան . . . . . «Վիշապ»
- 7) Շիրվանդաղեն . . . . . «Թոքակատարի հիշատակաբանից»  
8) Ժյուլ Վերն . . . . . «Նավակետ Գրանդի վորդիները»
- 9) Դ. Դեմիրճյան . . . . . «Ռաշիզմ»
- 10) Մարկ Տվեռն . . . . . «Հեկլբեր Փիննի արկածները»
- 11) Մուրացան . . . . . «Առաջալը»
- 12) Նար-Դոս . . . . . «Մեր թաղը» (պատմվածքներ.)

### Յ) ՈՒՐԻՇԻ ՈՒՂՂԱԿԻ ՅԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Քաղ. Յ Ժամ: Գյուղ՝ Յ Ժամ:

Բացատրել, վոր գրավոր և բանավոր խոսքի ընթացքում հաճախ անհրաժեշտ ե լինում մեջ բերել ուրիշի մըտքերը, կամ այն, ինչ վոր մի ուրիշն ասել ե այս կամ այն կապակցությամբ:

Ուզզակի և անուղղակի խոսքի ուղղագրությունը: Ուղղակի խոսքն անուղղակի դարձնելու ունակությունները: Յեթե ուզզակի խոսքը շատ կարծ ե, սովորաբար չակերտների մեջ չի առնվում և գլխավոր նախադասությունից բաժանվում ե վոչ թե միջակետով, այլ՝ բուժով:

### Գ) ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղա՞մ Ժամ: Գյուղ՝ Գ Ժամ:

Կետադրությունը պետք ե բացատրել շարահույսության կապակցությամբ: Կետադրություն՝ տրոնության, բացահայտության և առողջապահության նշաններ: Ստորակետի գործածության բոլոր դեպքերը, միջակետի և բութի գործածության բոլոր դեպքերը. գիծը և նրա գործածությունը հայերենում: բազմակետի, չակերտի, փակագծի, հարցականի, քացականչական նշանների գործածությունը հայերենում: Նախադասության վերլուծությունն ըստ նախադասության տեսակների, ըստ նախադասության անդամների և ըստ խոսքի մասերի:

Անհրաժեշտ ե աշխատանքն այնպես կազմակերպել, վոր առվորոնների յուրացումն ապահոված լինի: Շարահյուսական վերլուծության ժամանակ պետք ե առաջնորդվել հետեւ յալ ցուցմունքներով.

1) Շարահյուսական վերլուծության ժամանակ պիտի ունենալ միշտ կապակցված բովանդակալից, իդեոլոգիապես գիմացկուն և վորոշ նպատակահղացում ունեցող ընազիր:

2) Բարդ տեսակի նախադասությունների վերլուծության ժամանակ նաև պետք ե գտնել հիմնական մասը, հետո առանձին դարձվածքներ, բառախմբեր, ըստ վորում պարզ պիտի մատնանշվի առանձին մասերի փոխադարձ կապակցությունը:

3) Նախադասությունների վերլուծության ժամանակ կազմակերպող կենտրոնների և հիմնական տարրերի գտնելը պիտի համարել պարտադիր:

### 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Քաղա՞մ 8 վեցորյակ-24 Ժամ: 13 Ժամ լեզու, 11 Ժամ գրակ. Գյուղ՝ 7 յորորյակ-28 Ժամ: 16 Ժամ լեզու, 12 Ժամ գրակ.

### ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

#### 1) ՍՏՈՒԳՈՒՄ ՅԵՎ ԿՐԿՆՈՂՈՒԹՅՈՒՆ Յ ՀՐԴ ՔԱՌ. ԱՆՑԱՌԻ

Քաղ. 2 Ժամ: Գյուղ՝ 2 Ժամ:

Յերրորդ քառորդում անցած նյութի ամփոփումն ու համակարգումը

Դերբայական լրացումն ուսումնասիրելիս պետք ե ուսուցիչը հանդամանորեն բացատրի, վոր բարդ ստորադասական նախադասությունը պարզելու ժամանակ դերբայով արտահայտված յենթական կարող ե ունենալ ինչպես վորոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, այնպես ել յենթակա, խնդիր և պարագա լրացումներ: Այս բացատրվում ե նրանով, վոր դերբայն իրենի բայի մի ձեվ, անկախ իր վարած պաշտոնից, կարող ե ունենալ ստորոգյալի լրացումներ:

Այս նյութի ամուր յուրացման համար ուսուցիչը (Յ ՀՐԴ քառորդում) պետք է, վոր շատ վարժություններ արած լինի: իսկ յեթե չի արել, պետք ե կրկնողության և ամփոփման ժամանակ լուրջ ուշադրություն դարձնի այս թեմայի վրա:

#### 2) ՄԻՋԱՆԿՑԱԼ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղ. 2 Ժ. Գյուղ՝ Յ Ժ.

Միջանկյալ նախադասություններ: Միջանկյալ նախադասությունների անջատումն նախադասության այն անդամներից, վորոնց նկատմամբ իրենք միջանկյալ են. (փակագծերով, ստորակետներով և գծիկներով):

## ԲԱՆԱՎԱՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բառարանից ողտվելու ունակություն. բանավոր և գրավոր աշխատանքներին պատրաստվելու համար սովորողը պետք է կարողանա անհասկանալի բառերը փնտուել բառարաններում։ Ուսուցիչը պետք է աշակերտներին ողտվորեցնի ինքնուրույն աշխատանքի, վագորոք դասարանում ցույց տալով աշխատելու յեղանակը։ Բառարանից ողտվելու համար սովորողները պետք է իմանանա պայմանական նշանների և պայմանական կրծստումների մասին։

### ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԹԻ ՎՐԱ

Բարդ պլան կազմել։ Ցիտատներ բերելու վարժություններ՝ գրավոր և բանավոր. յերկու և ավելի աղքույրներից ողտվելու ունակություն։ Գեղարվեստական յերկերից գեղեցիկ կտորների արտագրության հմտությունն ոժանդակում և աշակերտի գեղարվեստական ճաշակի զարգացմանն ու հարստացնում ենրա բառապաշարը նոր գեղարվեստական դարձվածքներով։

### ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղ՝ 3 Ժ. Գյուլ՝ 4 Ժ.

Ամբողջական գեղարվեստական յերկի շուրջը գրավոր վերլուծական շարադրություններ։ Գրողների գրավոր բնութագրություն։ Աշակերտը պետք է կարողանա բացահայտել տվյալ գրվածքի իդեան և տալ նրա գեղարվեստական արժեքի գնահատականը։

Նյութի ընտրության ժամանակ պետք է պահպանել այտնեականությունը։

ա) Պատմողանկարագրական տեսք։

բ) Բնութագրություն։

գ) Ինքնուրույն ստեղծագործական աշխատանք։

Այս քառորդում անհրաժեշտ է անցկացնել գրականության վերաբերվող 2 աշխատանք և մի ստուգողական թելադրություն։

Հարկավոր է աշակերտներին սովորեցնել դրի ինքնուրույն շարադրություններ պատմողական, նկարագրական և աղատ ստեղծագործական շարադրություններ. որինակինչպես անցկացրինք գարնանային արձակուրդները, ինչպես տոնեցնք մայիս 1-ը և այլն։

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մերոդական ցուցմունքներ գրականության դասի ըուրչը

Այս բառորդը պիտի կրի ամփոփման և համագրման բնույթի։ Աշակերտը պետք է իմանա գեղարվեստական յերկի գիտակցական ընթերցանությունը և բանավոր ու գրավոր վերաբարապրի յերկի բովանդակությունը. գիսավոր պերսոնաժների բնութագրությունը։

Գեղարվեստական յերկը լավ հասկանալու համար, սովորողը պիտի իմանա՝ եպոխան, քաղաքական և տնտեսական կյանքը և գրողի կոնկրետ կենսագրությանը։ Գեղարվեստական յերկի ընթերցանությունը ուսուցչի կոմենտարիաներով. վերլուծել գեղարվեստական յերկը, տալ գեղարվեստական որրազները, կառուցվացը, լեզուն և գրողի ստեղծագործական մեթոդի սպեցիֆիկումը։ Ապա անցնել ամփոփման և աշակերտության յուրացման ստուգմանը։

Արտադասարանական ընթերցանությունը պետք է կազմակերպել այնպես, վոր վոչ միայն բարձրանա աշակերտության գրադացման մակարդակը, այլև այդ ոժանդակի անցած նյութի ամուր յուրացմանը։

### ԱԱԲԻՐ

Քաղաք՝ 4 Ժ. Գյուլ՝ 4 Ժ.

Սարիրի կյանքն ու գրական գործունեյությունը. տալ լդատմական տեղեկություններ Սարիրի ժամանակաշրջանի մասին։

«Մոլլա Նարեգդին» հանդեսի պրոդրեսիվ գերը ադրբեջանական յերգիծաբանական գրականության պատմության մեջ. Ռեակցիոն հոգեորականության պայքարը «Մոլլա Նարեգդին» հանդեսի ու նրա աշխատակիցների գեմ։

1905 թ. հայ-թրքական ընդհարումները, ցարական կառավարության և Ադրբեջանի կալվածատերերի ու բուրժուազիայի գերն այդ գործում։

«Բեյներմիել» (Խնտերնացիոնալ) վոտանավորը կարդալ և անգիր անել. տալ վոտանավորի գրական-գեղարվեստական արժեքը. Այս բանաստեղծության մեջ արծարծած զաղափարները, Բացատրել, վոր այս բանաստեղծությամբ Սարիրը կոչ ե անում յերկու յեղաբարկից ժողովուրդներին բարեկամալ և գաղարեցնել թշնամությունը։

«Հարուստը՝ Բազվի փահլաներին» կարդալ, վերլուծել և անգիր անել։

Սարիրի սուր յերգիծանքը, նրա լեզվի առանձնահատությունները։



## ՍԱԼՏԻԿՈՎ ՇԶԵԴՐԻՆ

Քաղաք՝ 3 ժամ, Գյուղ՝ 3 ժամ:

Սալտիկով Շչեդրինի կենսագրությունը. «Հեքիաթ փութեանդ պետի մասին, թե ինչպես նա ինքը զարմանքի մեջ ընկափ իր գործողություններից» հոդվածի ընթերցանությունը և վերլուծումը:

Սալտիկով-Շչեդրինն իր գրվածքներում անխնա ծաղրի յե յենթարկել ցարական կարգերը, նրա քաղաքապետներին և զանազան տիպի չինովնիկներին:

### ՄԱԹՍԻՄ ԳՈՐԿԻ

Քաղ. 4 ժ. Գյուղ՝ 4 ժ.

Մաքսիմ Գորկու կենսագրությունը. «Մայրը» (հատված Համանուն վեպից) հատվածի բանավոր վերլուծությունը. գաղափար տալ յերկի պատմագրական պրոցեսի մասին: Ծանոթացնել սովորողներին Ռուսաստանի բանվորական շարժման հետ այդ ժամանակաշրջանում:

### ԳՐԲԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրքից ոգտվելու համար սովորողը պիտի գաղափար ունենա հետեւյալ հարցերի մասին.

1) Ինչի՞ մասին ե խոսում հեղինակը գրքի առաջարեանում, վերջաբանում, ներածականում.

2) Ինչ՞ նշանակություն ունի գրքի մասիրի, գլուխների, պարբերությունների բաժանելը.

3) Ինչ՞ ե ուցենիզան, քննադատությունը և ինչ նշանակություն ունեն գրանք գիրքն ընտրելու ժամանակ:

### Ց-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Քաղաք՝ 8 վեցորյակ՝ 24 ժամ, 18 ժ. գրակ. 6 ժ. լեզու: Գյուղ՝ 7 յորորյակ՝ 21 ժամ, 15 ժ. գրականուրյան, 6 ժ. լեզու:

### ՐԱՅՖԻ

Քաղ. 5 ժ. Գյուղ՝ 4 ժ.

Կենսագրական տեղեկություններ ( Բաֆֆին Թբիլիսիում ողնում ե հոր առևտրական գործերին և լինում ե Իրանի ու Թյուրքիայի բազմաթիվ վայրերում, նորից Թբիլիսիում. Բաֆֆին և «Հյուսիսափայլը»: Բաֆֆին և «Մշակը»):

Բաֆֆու գրական գործունեյության շրջաները, «Հյուսիսափայլ»-ի շրջան և «Մշակ»-ի շրջան: Բաֆֆու առաջին շրջանի գործերը - «Մալրի» և նրա մյուս մանր պատմվածքները: Բաֆֆու բուրժուական-ազգայնական գաղափարախոսությունը: Այդ իդեոլոգիայի տեսանկյունից բուրժուազիայի և հոգեորականության հետամնաց խավերի քննադատությունը և մերկացումը («Զահրումար» և «Վոսկի աքաղաղ» վեպերը): Վերլուծել Մասիսյանի տիպը. ուեալիզմի տարրերը վերոհիշյալ վեպերի մեջ և նրանց գեղարվեստական արժեքը:

«Մշակ»-ի շրջան - Արծրունու հարպարակախոսությունը և Բաֆֆու աշխարհայացքի կապը: Բաֆֆին վորակե մարտական նացիոնալիզմի արտահայտիչ («Զալալեդին»), «Խենթ», «Կայծեր» և այլն):

Բաֆֆու գրական հիմնական մեթոդը ուսմանտիզմն է: Բաֆֆին իբրև պատմավիպասան („Մամվել“): Բաֆֆու ստեղծագործության ընդհանուր արժանիքները, արկածային վեպի ժանրի հաջող ոգտագործումը, լեզվի մշակություն, վառ պատկերներ, մի քանի տիպերի ժողովրդականացումը (որ. Տերթողիկ, քավոր Պետրոս, Մասիսյան):

Բաֆֆու ստեղծագործության թերություններն են - միակերպ հերոսներ, սիեմատիկ խարակաների պատկերում, վիպասանական ձևերի կրկնողություն և այլն:

Բաֆֆու կրած ազգեցությունները յեզրոպական ուսմանտիկ գրականությունից (Սկոտ և Հյուգո):

Րաֆֆին արժեքավոր և այնքանով, վոր յելնելով լիրերալ բուրժուազիայի դիրքերից, ըննադատել և ֆեռալական-կղերական վաճառականական հետամնացությունը։ Հաջող գործեր են նրա մի շարք ուելիստական գյուղացիական պատմվածքները («Անբախտ Հոփիսիսե», «Մի ուրվար հող»)։

Աղբյուրներ.

„Խաչագողի հիշատակարանը“ (հատված)

„Վոսկի աքաղաղ“ . . . (հատված)

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

Քաղ. 5 Ժ. Գյուղ 4 Ժ.

60-ական թվականների պոլսահայ աշխատավորական խավերի տնտեսական քայլքայումը և նրանց դժգոհությունը տիրող կարգերից։ Աշխատավորական շերտերի ծանր զրությունը պատկերացում և գտել խոշոր յերգիծարան Պարոնյանի ստեղծագործությունների մեջ։ Կենսագրական տեղեկություններ Դուրյանի մասին (նրա տնտեսական անապահով վիճակը, վորի հետեվանքով վախճանվեց յերիտասարդ հասակում, թոքախտից), Դուրյանի բանեցրած գրական ժանրերն են՝ լիրիկական բանաստեղծություններ, գրամաներ և նամակներ, բայց հայ գրականության պատմության մեջ իր պատվավոր տեղն և գրավում վորպես խոշոր լիրիկ բանաստեղծ։

Դուրյանի պոեզիան հանդիսանում է քաղաքային աշխատավորական խավերի ծանր վիճակի անդրադարձումը գրականության մեջ։ Պարոնյանը և Դուրյանը յեղել են նույն հասարակական խավերի արտահայտիչները, վորի հետեվանքով և Պարոնյանը բարձր և գնհատել ու սիրել Պ. Դուրյանին։ Դուրյանի լիրիկայի բնորոշ կողմերն են՝ սոցիալական բողոքի առկայությունը, դժբախտ սեր, ըմբռոսացում մահվան ու աստուծու դեմ, հոռետեսություն և համակերպում։

Բանաստեղծության մեջ Դուրյանի բերած նորությունները՝ գրական աշխարհաբար լեզուն, վոճի պատկերավորություն, բնորոշ զբազմունքների պատկերում, ուժեղ լիրիզմ և ապրումների անմիջականություն, կենդանի սիրուակայություն, անձնական և հաստրակական վողբերգության ցայտուն պատկերացում։

Դուրյանի գրական մեթոդը ուսմանտիզմն է, վորը սակայն նման չե բուրժուական ազգայնական մի շարք գրողների

բանեցրած ուսմանտիզմին։ Դուրյանի ուսմանտիզմը մանր-բուրժուական ուսմանտիզմն է, վորի մեջ զգացվում և դժգություն տիրող կարգերից և աչքի յե ընկնում իր սոցիալական բողոքի շեշտով։

Առավելությունների հետ մեկտեղ Դուրյանն ունի մի շարք թերություններ։ Նրա բանաստեղծությունների մեջ նկատվում և սկսնակ հեղինակի անվարժություն, գրաբարի մնացորդներ լեզվի մեջ, կրկնողություններ և անմշակություններ (այդ թերությունները մասամբ բացատրվում են նրանով, վոր մեռել է չափազանց յերիտասարդ հասակում և հատրավորություն չի ունեցել մշակելու իր բանաստեղծությունները)։

Դուրյանն աղղեցություն և կրել ֆրանսիական ուսմանտիկ գրականությունից, գերազանցորեն վիկտոր Հյուգոյից։

Աղբյուրներ

Սիրել

Նրա հետ

Դրժել

Սկ, սկ

Թրքուհին

Ինձ կսեն

Տրտունջ

Իմ սահը

Լճակ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻ ՍՅԱՆ

Քաղով<sup>6</sup> 6 Ժ. Գյուղ<sup>5</sup> 5 Ժ.

Կենսագրական տեղեկություններ։ Հովհաննիսյանը վորպես մանր-բուրժուական գաղափարախոս։ Նրա բանաստեղծությունների մեջ արտահայտություն և գտել Անդրկովկասի մանր-բուրժուազիայի քայլքայվող վիճակը։ 80-ական թվականների գյուղի քայլքայման պրոցեսը, աշխատավոր գյուղացիության պառակերիզացիան և նրանց տնտեսական վատթար վիճակը, վորն արտահայտություն և գտել Հովհաննիսյանի պոեզիայում։ Վաշխառույությունն իրեւ հասարակության հիմնական չարիքներից մեջ։ Հեղինակի պաստիվ բողոքը կապիտալիզմի դեմ։ Բարեկործության և բարության քարոզը։ Այդ բոլոր միջոցների անբավարարության գիտակցումը, հուսահատությունը, տրամադրության ներզգացում («Աի, տվեք ինձ քաղցր մի քուն»)։

Աղգայնության և կրօնականության վորոշ աղղեցությունը Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ։

1905 թ. հեղափոխության ընթացքում Հովհաննիսյանի լիրիկայում յերեվան և գալիս ըմբռոսացման վորոշ մոտիվներ («Պրոմեթեյ») պատմական անցյալի ժողովրդական

գեմոկրատական մեկնաբանություն։ Ժողովրդական պոեզիայի ոգտագործում («Արտավագդ», «Արազն յեկավ» և այլն):

Հայկական պոեզիան մինչև Հովհաննիսյանը՝ Հովհաննիսյանը բանաստեղծության արվեստը հասցրեց մի նոր բարձրության։ Հովհաննիսյանն իրքեվ բանաստեղծական բարձրության։ Հովհաննիսյանն իրքեվ կարծիքը։ Հովհաննիսյանը վորպես լիրիկական ժամաների առաջին հմուտ վարպետն արեկելահայ գրականության մեջ։

Հովհաննիսյանի պոեզիայի առավելություններն են՝ լեզվի և գոճի պատկերավորությունը ու մշակությունը, պատկերների պարզությունը և անկեղծությունը, կենդանի սիրոնկարագրությունը։ Մարկլորի ոգտագործման մեջ Հովհաննիսյանի և իսահակյանի մեթոդների նմանությունները։ Ժողովրդական բառ ու բանի հարաֆաս յուրացումը և վերարտագրությունը։ Հովհաննիսյանը փորպես խոսքի վարպետ և յերկրոպական ու սուսական մի շարք գրողների հմուտ թարգմանիչ։ Պուշկինից կրած ազգեցության ինդիրը և Հովհաննիսյանի խոստովանությունն այդ առթիվ։

### Աղյուսեներ

Գեղջկուհու զարդը	Հատիկ
Արազն եկավ	Արտավագդ
Ալագրազ բարձր սարին	
Փափագ	Աշուղ
Ախ, տվեք ինձ քաղց մի քուն	

### Լեզվի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (2 ԺԱՄ)

Նալբանդյանի և Նազարյանի լեզվագիտական տեսակետները։ Աշխարհաբար գրական լեզվին նախորդող շրջանները։ «Հյուսիսափայլ»-ի դերը նոր գրական լեզուն որինակացնելու և կերտելու ասպարիզում։ Հայկական գեղարվեստական դրականության դերը գրական հայերենի զարգացման և տարածման գործում։ Նախահոկումբերյան գրական հայերենի ուղղագրությունը և նրա բնույթը։

### ՔԵՐՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՑԱՆՐՈՒԹՅՈՒՆ (2 ԺԱՄ)

Կրկնել ամբողջ տարվա կուրսը լեզվի պատմությունից և քերականությունից—2 ժամ։ Գրավոր աշխատանք (2 ժամ)։ Մասիսյանի տիտը շարադրություն։ Դրել Հովհաննես Հովհաննիսյանից գրավոր աշխատանք։

### Զ.ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Քաղաք՝ 8 վեցորյակ, 16 ժամ գրակ, Դյուլ՝ 7 յորորյակ։  
14 ժամ գրակ։

### ՅԵՐՎԱՆԻ ՈՏՅԱՆ

Քաղաք՝ 4 ժ. Դյուլ՝ 3 ժ.

Կենսագրական տեղեկություններ։ Ոտյանը վորպես հասարակական գործիչ, Ոտյանը վորպես խմբագիր և ժուռանական գրական ասպարեզ և իջնում անցլալ դարել 90-ական թվականներին—դա այն շրջանն եր, յերբ ամիրայությունը տեղի յետ տալիս առեվտրական բուրժուազիայի առաջ։

Յերվանդ Ոտյանն իրենից բուրժուական ուժքորմիզմի ներկայացուցիչ։

Հայ առեվտրական բուրժուազիայի բարքերի քննադատությունը՝ նրան ուղղելու մտադրությամբ։ Ոտյանն իրեն համարում եր բարոյական ախտերի բժիշկ և այդ ախտերը մերկացնելիս առաջնորդվում եր յերկրոպական «Խուսավոր» բուրժուազիայի որինակով, վողեկվորությամբ խոսելով անգլիացիների մասին։ Ազգայնականությունն Ոտյանի աշխարհայացքի մեջ։ Նա սկզբունքով համակրել է ազգայնական բուրժուական կուսակցություններին։

Տալով առեվտրական բուրժուազիայի ներկայացուցիչների քացասական կողմերի մներկացումը, Ոտյանը միենույն ժամանակ վորպես հակադրություն տալիս և գրական տիպեր այդ նույն հասարակական խավից։ Ոտյանը չի ժխտում բուրժուազիան, յեկեղեցին և հոգեվորականությանը, այլ նապահանջում ին ուժքորմ։ պահանջելով առեվտրականից, վոր նա լինի բարերար, իսկ հոգեվորականը՝ կրթված և գիտությամբ զբաղվող։

Յելնելով այդ տեսանկյունից, Ոտյանը տալիս և ազգային բարեգործության քարոզ և ծաղր՝ կեղծ բարեգործների նկատմամբ։ Կեղծ բարերար տիպը ավել և Ազգային բարե-

ըար՝ վիպակում: Վերլուծել Սահակ-Եֆենդու տիպը: Նրա քննավորության բնորոշ գծերն են՝ խորամանկությունն և խարեբայությունն, բարերար հոչակվելու համար ոգտագործում և այն բոլոր խարդախությունները, վորը նա կիրառում է իր առելութրական պրակտիկայում: Շահամոլ առելութրականի մարմնացումն ֆողմայի տիպը („Կատարյալ մարդ ըլլալու արվեստը“վեպից): Ֆողմայի տիպը մեր գրականության լավագույն յերգիծական պրորետներից մեկն և Պարոնյանի կերտած պորտրետներից հետո: „Ընսանիք, պատիվ, բարոյական“ վեպի մեջ նույնպես տվել ե վաճառականի բացասական տիպը, (Ղուկաս-Եֆենդին): „Միջնորդ ուրի պապան“ վեպի մեջ տվել ե բացասական հոգեվորական-ների քննադատությունը (Տեր-Բարսեղի տիպը):

Դրանց հետ մեկտեղ Ոտյանը տալիս ե դրական առելութրականների և հոգեվորականների տիպեր (Գարեգինը „Թաղականի կնիքը“ վեպի հերոսներից մեկը): Ոտյանի ուսալիզմի բուրժուական սահմանափակությունը: Նա հաջող ե, յերբ տալիս ե առելութրականների և հոգեվորականնության քննադատությունը, բայց նրա ուսալիզմը կարում ե, յերբ ցանկանում ե այդ խավերի մեջ տեսնել դրական կողմերը, վորովհետեւ զրանով նա չի տալիս տիպիկական խարակտերներ տիպիկական հանգամանքների մեջ:

Ոտյանի յերկերի գեղարվեստական արժեքը, հումորի և սարկազմի հաջող գործադրումը, լեզվի ճոխություն և սրություն: Համեմատել Պարոնյանը Ոտյանի հետ և ցույց տալ վոր իրենց բնույթով Պարոնյանի յերգիծանքը տարբերվում է Ոտյանի յերգիծանքից, վորը պայմանավորված ե այդ յերկու հեղինակների տարբեր դասակարգերի պատկանելությամբ: Ոտյանն ոգտագործել Պարոնյանի յերգիծանքի վորոշ պրիորիները, բայց իր յերգիծանքի ուղղությամբ տարբերվում է Պարոնյանի յերգիծանքից:

Աղյուսեցեր

«Աղջային բարերարը»:

Ավետիք ԽՍԱՀԱՅԱՆ  
Քաղաք՝ 6 Ժ. Գյուղ՝ 5. Ժ.

Կենսագրական տեղեկություններ: Իսահակյանը վորպես միրիկ բանաստեղծ: Իսահակյանի լիրիկայի բնորոշ թեմա-տիպան՝ սեր, գյուղական բնությունն և աշխատանք, բողոք

մարդկանց միջև յեղած սոցիալական անհավասարության դեմ: Բուրժուական կարգերի քննադատությունը, հիասթափություն, անարխիզմ և անհատապաշտություն:

Թաղաքային մանր բուրժուազիայի և գյուղացիության քայլքայման ուժեղացումը կապիտալիզմի հարվածների տակ և գրա արտահայտությունն իսահակյանի լիրիկայի մեջ:

Իսահակյանը վորպես քայլքայվող մանր-բուրժուազիայի արտահայտիչը գրականության մեջ, իսահակյանի պեսսիմիզմի արտացոլումն իր սիրային լիրիկայի մեջ: Իսահակյանի սիրո փիլիսոփայությունը (Հավերժական սեր, “Ասպետուսերը” և այլն):

Իսահակյանի պոեզիայի մեջ յեղած հակասությունները: Ուեակցիայի տարիների աղղեցությունն իսահակյանի ստեղծագործությա վրա („Արու-լալա-Մահարի“): Այդ պոեմը վորպես ուսակցիայի տարիների մանր-բուրժուական ինտելիգենցիայի վորոշ շերտերի հոսեածության արտահայտություն. վորպես „Արու-լալա-Մահարի“ պոեմի հակադրություն՝ համեմատել պրոլետարիատի յերգիչ Հ. Զակորյանի նոր առավոտ պոեմի հետ, վորը լույս ե տեսել նույն թվին, վոր թվին վոր լույս ե տեսել իսահակյանի պոեմը: Ցույց տալ այդ յերկու պոեմների գաղափարական տարբերությունը և հակադիր լինելը, վորը պայմանավորված ե այդ յերկու հեղինակների դասակարգային տարբերությամբ:

„Արու-լալա-Մահարի“-ն հանդիսանում է իսահակյանի սուբկուլիզմի և անարխիստական հայացքների սինթեզը:

Այդ յերկի գեղարվեստական խոզոր արժեքը:

„Արու-լալա-Մահարի“ պոեմի հակարուրժուական տենդեցները: Իսահակյանի գրական մեթոդը հիմնականում ոռմանտիզմն է: Իսահակյանի լիրիկայի բնորոշ գծերը-զգացմանը անմիջականություն, վառ կոլորիտ, ժողովրդական բանահյուսության հաջող ոգտագործում („Ալազյազի մանիներ“ բանաստեղծությունների շարքը) բանաստեղծության արվեստի տիրապետում և այլն:

Թերություններ-չափանացություններ, լականությունն, թեմաների և մոտիվների հաճախակի կրկնությունն:

Իսահակյանը բազմաժամանակ գրող ե, գրել ե պոեմ, պատմվածք, բալլագ, ելեգիա և այլն:

Ժողովրդական եպոսի մշակումն իսահակյանի մոտ („Սանա Մհեր“), “Սասնա Մհերը“ համեմատել թումանյանի «Սասունցի Դավիթ-“ի հետ և ցույց տալ թումանյանի առավելությունները և իսահակյանի թերությունները ժողովրդական եպոսի մշակման ասպարիզում:

Ուստա Կարո<sup>ւ</sup> վեպի հատվածների մասին: Իսահակյանը  
և Խորհրդային իրականությունը: Իսահակյանի կատարած  
գերը հայ գրականության պատմության մեջ—լիրիկական  
ժանրի բանստեղծության գարգացման բնագավառում:

### Աղյուրներ

Յես յերգիչ եմ	Մաճկալ ես
Անհայտ, անորոշ	Ախ, մեր սիրուը
Սիրոս յեկինք ե	Շուրջս ապօռում են
Կուզես լինեմ	Ալապյազի մանիներ
Սիրոտ իմ, սպասիր	(հատվածներ)
Յես կուզեյի արեվավառ	Ուստա Կարո
Կյանքի կավում	Հավերժական սերը
	Արու-լալա-Մահարի (հատվ).

### ՎԱՀԱՆ ՏԵՐՑԱՆ

Քաղ. 4 ժամ, Գյուղ՝ 4 ժամ:

Կենսագրական տեղեկություններ: Տերյանի ժամանակա-  
շրջանը: 1905 թ. Հեղափոխությունը և դրան հաջորդող  
ռեակցիայի տարիների ազդեցությունը Տերյանի ստեղծա-  
գործության վրա: Թումանյանի և Իսահակյանի ազդեցու-  
թյունը Տերյանի սկզբնական ստեղծագործության վրա: Տեր-  
յանի և Իսահակյանի ստեղծագործության նմանություն-  
ները (հոռետեսություն և անհատապաշտություն):

Տերյանը վորպես մանր-բուրժուական անհատապաշտական  
լիրիկայի հետագա գարգացնող: Նրա արվեստի բարձր կու-  
տուրան:

Ռեակցիայի ուժեղ ազդեցությունը Տերյանի լիրիկայի  
վրա: Փախուստ իրականությունից և մարդկանցից, մեսու-  
թյան, մոռացումի և անհույս տրամադրության մոտիվ-  
ները նրա բանաստեղծություններում:

Միմուլիզմի ազդեցությունը Տերյանի լիրիկայի վրա  
(Վերլեն, Բըրյուսով, Բլոկ)՝ Մթնաշազի անուրջները, սեր գեպի  
անձրեվոտ աշունը և այլն:

Տերյանը գորակու քաղաքի քայքայվող մանր-բուրժուա-  
կան ինտելիգենցիայի արտահայտիչն ու նրա տրամադրու-  
թյունների յերգիչը:

Տերյանի պոեզիայի բնորոշ գծերն են—անհատապաշ-  
տություն, հոռետեսություն, հուսալքում, յերազ և պատրանք:  
Տերյանի “Նաիրյան” շարքի բանաստեղծությունները հան-  
դիսանում են սպեցիֆիկ տրամադրությունների արտահայ-  
տություն:

Տերյանը և Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը:  
Պրոետարական մեծ հեղափոխության թողած ազդեցությու-  
նը նրա ստեղծագործության վրա: Տերյանի բարձր արվես-  
տը, հայկական տաղաչափության կատարելագործությու-  
նը և մշակված լեզու:

Գրել և լիրիկական բազմաթիվ ժանրերով՝ տրիոլետ, սո-  
նետ, գաղել և այլն:

Տերյանն իր գրանսուիական և սուսական սիմովոլիստ-  
ների թարգմանիչ:

### Աղյուրներ

Աշնան մեղեղի	Հատված (հոգատանջ սրտով)
Հրաժեշտ	Հրաժեշտ զաղել
Մթնաշազ	Կարծես թե դարձել եմ
Աշուն և	Միրտդ վորպես
Կարուսել	Լուսաբացին նա բարձրացավ
Տիրություն	կախաղան.
14 տող	Վողջույն Հեղափոխության:
Շշուկ և շրյուն	Շշուկ և շրյուն
ԳրԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ (2 ԺԱՄ)	ԳրԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ (2 ԺԱՄ)

Յերգանդ Ոտյան—“Ազգային բարերար” գեղարվեստա-  
կան յերկի շուրջը վերլուծական շարադրություն:  
Իսահակյան—“Արու-լալա—Մահարի” հատվածի վերուլ-  
թյունը:

Դաքի՝ Բագվի պատկերումը «Ֆիրուզա» պատմվածքի մեջ՝ կերլուծել այդ ստեղծագործությունը:

«Ֆիրուզա»

Աղբյուրներ

ԲԱՐԲՅՈՒ

Քաղաք՝ Յ. Գյուղ՝ 4 Ժ.

Կենսագրական տեղեկություններ: (Մասնակցել և վորպես զինվոր 1914 թ. Իմպերիալիստական պատերազմին. տեսել և մարդկային այդ սպանականոցը, վորը հետագայում խորը պատկերում և ստացել նրա ստեղծագործության մեջ: Բարբյուսը վորպես ակտիվ հասարակական-քաղաքական գործիչ: 1923 թ. մտնում ե կոմկուսի շարքերը: Բարբյուսը վորպես իմաստական պատերազմի և ֆաշիզմի անհաշտ թշնամի, Խորհրդային Միության բարեկամ և պաշտպան: Բարբյուսը վորպես ականավոր հրապարակախոս և հասարակական գրական գործիչ:)

Բարբյուսը վորպես Յելքոպայի հեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչ: Նրա ստեղծագործություններից հայտնի յե «Կրակ», վեպը, վորը թարգմանված ե բազմաթիվ լեզուներով:

«Կրակ»-ը վորպես խոշոր ռեալիստական դոկումենտալ յերկ, վորտեղ մերկացնում ե իմպերիալիստական պատերազմի սոցիալական արմատները: «Կրակ»-ը վորպես խոշոր յերեվոյթ համաշխարհային գրականության պատմության մեջ: Լենինը շատ բարձր ե գնահատել այդ յերկը:

Բարբյուսը մարդկության լավագույն կուլտուրայի պաշտպան և ֆաշիզմի դեմ պայքարող:

Աղբյուրներ

«ԿՐԱԿ»

ԳՐԱՎՈՐ (2 ԺԱՄ)

«Հերկած խոպան» և «Ֆիրուզա» յերկերի վերլուծական շարադրություն:

ԱՐՏԱԴԱՍՄԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՅՆ ԴՐՅԵՐԻ  
8018ԱԿ

Հ-ՐԴ ԴԱՍՄԱՐԱՆ

Հ. Հակոբյան . . . . «Բանաստեղծություններ.»  
Ստեփան Զորյան . . . . «Գրադարանի աղջիկը»  
Հ. Աղայան . . . . «Արություն և Մանկել»

Մուրացան . . . . «Առաքյալը», «Նոյի Սգուավը»  
Հ. Թումանյան . . . . «Բանաստեղծություններ»  
Հ. Պարոնյան . . . . «Մեծապատիկ մուրացկաններ»  
Շիրվանզագի . . . . «Վարդան Ահրումյան», «Արտիստ»  
Դարբիել Սունդուկյան . . . . «Պեպո»  
Վ. Տերյան . . . . «Բանաստեղծություններ»  
Մ. Յու. Լիրմոնտով . . . . «Մծիրի»

Լ. Ն. Տոլստոյ . . . . «Պոլիկուշկա», «Հաջի Մուրադ»  
Մ. Գորկի . . . . «Մայրը»

Ա. Փաղեցեվ . . . . «Զախշախում»  
Շոլյանով . . . . «Հերկած խոպանը»

Ռոմեն Ռոլլան . . . . «Ժան Բրիստոֆի մանկությունը»

8-րդ դասարան

Վիկտոր Հյուզո . . . . «93 թիվ»  
» . . . . «Եռնանի»

Հ. Պարոնյան . . . . «Մեծապատիկ մուրացկանները»  
» . . . . «Ազգային ջողեր»

Շոթար Ռուսթավելի «Վազրենավորը»

Բայրոն . . . . «Չալդ Հարոլդ», «Մանֆրեդ»

Թումանյանի թարգ. «Իլիա Մուրոմեց»  
Թումանյան . . . . «Սասունցի Դավիթ»

Լերմոնտով . . . . «Մծիրի»  
Ա. Պուշկին . . . . «Զրահեղձը»

Նեկրասով . . . . «Հայրենիք»

9-րդ դասարան

Զ. Սվիֆտ . . . . «Գուլիվերի ճանապարհորդությունը»  
Մովսես . . . . «Տարտյուֆ»

Գոգոլ . . . . «Կերաքննիչ»

Պարոնյան . . . . «Ազգային ջողեր», «Բաղդասար աղբար»

Թումանյան . . . . «Սասունցի Դավիթ», «Հերիաթներ»,  
» . . . . «Մի կաթիլ մելլը», «Թմբկաբերդի առումը»

Բահական . . . . «Արու-լալա-Մահարի»

10-րդ դասարան

Պահապառով . . . . «Բըուակի»

Նովիկով-Պրեբոյ . . . . «Ճուսիմա»

Փուրմանով . . . . «Չապայեվ»

Ն. Ռոստովսկի . . . . «Խնչպես ե կոփկում պողպատը»

Լ. Տուստու . . . . «Պատերազմ և խաղաղություն»

ՀՀ Ազգային գրադարան



NL0246527



95н 40 4.

10. 253

МП

285

2

ПРОГРАММНО-МЕТОДИЧЕСКОЕ  
УКАЗАНИЕ  
ПО ЯЗЫКУ И ЛИТЕРАТУРЕ

НА IV ЧЕТВЕРТЬ  
(Для V—X классов)

АЗЕРНЕШР  
Учебно-педагогический отдел  
Баку—1938